

ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ
ԿԻՍԱԴԱՐԵԱՆ ՀԱՄԵՐԱՇԽ
ԳՈՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԳԱՅԻՐԷ - 2026

ՊԵՐՃ ԹԵՐՁԵԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ
ԿԻՍԱԴԱՐԵԱՆ ՀԱՄԵՐԱՇԽ
ԳՈՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԳԱՀԻՐԷ - 2026

Հեղինակը սոյն գրքոյկը գրել սկսած էր 2025 թուականի Փետրուարի վերջերուն: Սակայն, գրքոյկին մէջ տրուած պատմական դէպքերուն տուեալները մանրակրկիտօրէն եւ բժախնդրօրէն ճշդելու նպատակով եւ, առաւելաբար, առողջական լուրջ խնդիրներու պատճառով, ցաւօք սրտի, ան չկրցաւ գրքոյկը հրատարակել, թէեւ աւարտին հասցուցած էր անոր բովանդակութիւնն ամբողջութեամբ:

Հանգուցեալին «կարապի երգը» հանդիսացող գրքոյկը յետմահու կը հրատարակէ իր այրին՝ տիկին Սեդա Սամուէլեան Թէրզեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԷՋ ՏԻՐՈՂ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ	3
ԱՆԱԿՆԿԱԼ	5
ԳՏՆՈՒԱԾ ԵՐԿՈՒ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹԵՐԸ	7
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ	8
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ	10
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՈՐԴԵԳՐՈՒՄ	11
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԴԻՄԱԳՐԱԻԱԾ ՀԱՐՑԵՐԸ	13
ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ	16
ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	17
ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ, 23 ՅՈՒԼԻՍ 1952	18
ԵԳԻՊՏՈՍԻ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ	18
ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԻՆ ՄԱՍԻՆ	19
ԻՐԵՐԱՅԱԶՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ	20

ՄԵԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԻ (ՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԻ) ՕՐԷՆՔԸ.....	21
ՆՈՐ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆ	22
ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ	24
ՄԵՐ ԱՂԲԻԻՐՆԵՐԸ.....	25
ԳԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏՈՄԱՐՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ 1952--1975 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏՈՒԵԱԼՆԵՐ.....	26
ՑՈՒՑԱԿ ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ԻՐԱԽՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒՆ ԹՈՒԱՔԱՆԱԿՆԵՐՈՒՆ.....	28
ԳԱՀԻՐԷԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱԽՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒ ԹՈՒԱՔԱՆԱԿԻՆ ՏԱՐՈՒԲԵՐՈՒՄԸ.....	32
ՀՊԱՆՑԻԿ ԱԿՆԱՐԿ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԹԵՄԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ	33
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ՅԱՋՈՐԴՈՂ ՅԱՋՈՂ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ	35
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	36
«ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ»ԻՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻՆ ՊԱՏՃԷՆԸ.....	38

**ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ
ԿԻՍԱԴԱՐԵԱՆ
ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ**

**ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԷՋ ՏԻՐՈՂ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ**

2025 Հոկտեմբեր 15-ին ամբողջ կէս դար մը անցած պիտի ըլլայ այն բարեբաստիկ թուականէն, երբ Եգիպտոսի մէջ գործող երեք հայ աւանդական կուսակցութիւնները («Արեւ»ի շրջանակ, «Յուսաբեր»ի շրջանակ եւ «Ջահակիր»ի շրջանակ) համաձայնագիր մը ստորագրած են՝ եգիպտահայ համայնքին գործերը համագործակցական մթնոլորտի մը մէջ միասնաբար վարելու համար:

Արդարեւ, ճիշդ է որ եգիպտահայ համայնքին մէջ համերաշխ գործակցութեան համար համաձայնագիր մը ստորագրուած է 15 Հոկտեմբեր 1975-ին, սակայն որեւէ քննարկում չէ եղած անոր էութեան մասին:

Այս ուղղութեամբ առաջին անդրադարձը եղած է 43 տարի վերջ՝ 2018-ին, Պէյրութի մէջ հրատարակուող «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տազեսեանի կողմէ, որ նոյն ատեն տնօրէնն է յիշեալ համալսարանին «Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն»ին:

Ինչպէս ծանօթ է, վերոյիշեալ Կեդրոնը 2011-էն սկսեալ հերթական չորս գիտաժողովներ կազմակերպած է, համահայկական հետաքրքրութեան առարկայ եղող նիւթերու մասին:

2014-էն սկսեալ կայացած գիտաժողովներու ընթացքին, սփիւռքեան տարբեր համայնքներու պատմութեան եւ գործունէութեան շուրջ զեկուցումներ ներկայացուած են հարցերուն գիտակ անձերու կողմէ:

Այդ զեկոյցները իւրաքանչիւր գիտաժողովի աւարտէն ետք հրատարակուած են տուեալ գիտաժողովին յատուկ հատորին մէջ:

Այսպէս, համայնքներու վերաբերող գիտաժողովներէն առաջինը նուիրուած էր Լիբանանին (2014), որուն յաջորդած են՝ Սուրիոյ (2015), Յորդանանի (2016) եւ Իրաքի (2017) գիտաժողովները: 2018-ին հերթը եկած էր «Եգիպտոսի Հայերը» թեմայով գիտաժողովին, որ նախատեսուած էր կայացնել երկու հանգրուաններով՝ Ապրիլ 2018-ին Գահիրէ եւ Մայիս 2018-ին Պէյրութ:

Գիտաժողովին առաջին հանգրուանը կայացաւ Գահիրէի Ազգային Առաջնորդարանին աջակցութեամբ՝ «Եգիպտոսի Հայերը» թեմայով, իսկ երկրորդ հանգրուանը կայացաւ Պէյրութի մէջ՝ «Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ Հայերը» թեմայով:

Դոկտ. Տազէսեան, «Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն»ի տնօրէնի իր հանգամանքով, քանի մը կարճ այցելութիւններով Գահիրէ կու գար, հոն կայանալիք գիտաժողովին վերաբերեալ նախապատրաստական աշխատանքներ տանելու: Ան այս այցելութիւններուն ընթացքին նկատած է որ եգիպտահայ համայնքին մէջ գործող տարբեր կուսակցական մարմիններու անդամները իրարու հետ շատ սիրալիր յարաբերութիւններ ունին, ինչ որ շատ տպաւորած է զինք: Ան փափաք յայտնած էր որ սոյն համերաշխ գործակցութեան եւ սիրալիր յարաբերութիւններուն տուն տուող պարագաները լուսաբանուին այդ դրական երեւոյթը համայնքներու որպէս օրինակ փոխանցելու համար:

Դոկտ. Տազէսեանի հետ գոյութիւն ունեցող երկարամեայ ծանօթութեան բերումով, ան առաջարկեց որ յանձն առնեմ եգիպտահայ համայնքի համերաշխ գոյակցութեան մասին զեկոյց մը ներկայացնել, որ պիտի կարդացուէր Գահիրէի մէջ կայանալիք գիտաժողովի յայտագրէն դուրս զեկոյցներու ներկայացման ընթացքին դադարի մը պահուն:

Իրեն դիտել տուի, թէ այդ զեկոյցը պատրաստելու համար

հարկ է ունենալ վաւերական տեղեկութիւններ, որպէսզի ներկայացուած նիւթը համոզիչ ըլլայ: Հետեւաբար, Դոկտ. Տազէսեանին տեղեկացուցի, թէ պատրաստ չէի այդ գեկոյցը ներկայացնելու, մինչեւ որ կարենայի ձեռք բերել 1975-ին Գահիրէի մէջ գործող երեք աւանդական կուսակցութիւններու ներկայացուցիչներուն ստորագրած համաձայնագիրը:

Այս խօսակցութիւնը կը դառնար Գահիրէի մէջ կայանալիք գիտաժողովի նախօրէին: Այդ գիտաժողովէն յետոյ դիմեցի Եգիպտոսի մէջ գործող հայ աւանդական կուսակցութիւններու մերօրեայ ղեկավարներուն, որոնք բոլորն ալ միաբերան հաստատեցին, թէ իրենց մօտ չունին նման համաձայնագրի մը ո՛չ բնօրինակը եւ ո՛չ ալ պատճէնը:

ԱՆԱԿՆԿԱԼ

Քանի մը տարի առաջ՝ գրադարանիս թուղթերը դասաւորելու ժամանակ, ձեռքս անցաւ բարակ թղթապանակ մը, որուն մէջ կային նամակի թուղթի չափով չորս պատճէնահանուած նիւթեր: Չանոնք՝ աչքէ անցընելով, անդրադարձայ որ անոնց մէջէն երկուքը՝ իրենց վրայի ստորագրութիւններով, կը ներկայացնէին 15 Հոկտեմբեր 1975-ի եգիպտահայ մամուլի երեք օրկաններուն՝ «Արեւ»ի, «Յուսաբեր»ի եւ «Չահակիր»ի ներկայացուցիչներուն կողմէ ստորագրուած ՀԱՄԱԶԱՅՆԱ-ԳԻՐը:

Թղթապանակին մէջ գտնուող միւս երկու պատճէնահանուած թուղթերը կը վերաբերէին 1979-ին կայացած Թեմական Ժողովի մասնակի ընտրութիւններուն առթիւ ստորագրուած յայտարարութեան մը, որուն տակ ստորագրած էին մասնակի ընտրութեան թեկնածուները՝ իրենց կողքին ունենալով վիճակով չդադրած երեսփոխաններուն ստորագրութիւնները:

Ինծի համար՝ իմ մօտս նման թուղթերու գոյութիւնը բոլորովին անակնկալ էր, տեսակ մը անլուծելի առեղծուած:

Ի՛նչ պայմաններու տակ երեք աւանդական

կուսակցութիւններու կողմէ ստորագրուած ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐը ինծի հասած պէտք է ըլլայ:

Երկար մտածելէ յետոյ, հասայ այն եզրակացութեան, թէ 46 տարուան հնութիւն ունեցող այս ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐը ինծի հասած պէտք է ըլլայ բարեկամիս՝ ողբացեալ Նորայր Տեովլէթեանի միջոցով, քանի որ ան կը գտնուէր «Արեւ»ի շրջանակին մէջ՝ պատասխանատու եւ գործօն դիրքի վրայ: Կ'ենթադրեմ որ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐը ինծի բերուած ըլլայ ստուգում մը կատարելու համար. սակայն հարցը, կ'երեւի թէ, աճապարեալ չըլլալուն, մէկ կողմ դրուած է եւ տասնեակ տարիներու հոլովոյթով անոր գոյութիւնը մոռցուած:

Անշուշտ, այս անսպասելի «գիւտ»էն վերջ, բնական էր որ տեղեակ պահէի Դոկտ. Տազէսեանը իրերու կացութեան մասին:

Դոկտ. Տազէսեան ընդարձակ նամակով մը նախ իր ուրախութիւնը կը յայտնէր նիւթերու յայտնաբերումին համար եւ կ'առաջարկէր «եգիպտահայ համերաշխութիւն» թեմային լուսաբանութեան համար 13 կէտերէ բաղկացած հարցադրումներու ցանկ մը, ենթադրեալ զեկոյցիս մէջ արծարծուելիք նիւթերուն համար:

Դժբախտաբար, այդ տեղին եղած հարցադրումներուն ճնշող մեծամասնութեան պատասխան գոյութիւն չունէր: Հետեւաբար, կարելի չեղաւ ցանկէն օգտուիլ, բացի քանի մը հարցադրումներէ:

Մեր պրպտումները ցոյց տուին թէ եգիպտահայ համայնքին անդամներուն փոխադարձ յարաբերութիւնները կարգաւորող որեւէ փաստաթուղթ գոյութիւն չունի, բացի աւանդական երեք կուսակցութիւններուն ներկայացուցիչներուն ստորագրած Համաձայնագրէն:

Իրերու այս կացութեան առջեւ չէինք կրնար ընդառաջել Դոկտ. Տազէսեանի ներկայացուցած փափաքին:

Տուեալ պայմաններուն մէջ մեզի կը մնար նախ ծանօթանալ երեք կուսակցութիւններուն միջեւ ստորագրուած Համաձայնագրին բովանդակութեան, ապա, մեր ուսումնասիրութեան արդիւնքը ներկայացնել ընթերցողին:

ԳՏՆՈՒԱԾ ԵՐԿՈՒ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹԵՐԸ

Վերադառնալով վերը յիշուած երկու վաւերաթուղթերուն, անոնցմէ առաջինը «Համաձայնագիր» խորագիրը կը կրէ, իսկ երկրորդը՝ 1979-ին Թեմական մասնակի ընտրութիւններուն վերաբերեալ յայտարարագիր մըն է, որ անմիջական կապ մը չունի մեր շօշափած նիւթին հետ:

Առաջին վաւերաթուղթը, որ Գահիրէի մէջ գործող երեք աւանդական կուսակցութիւններուն օրկաններուն յաջորդաբար «Արեւ»ի, «Յուսաբեր»ի եւ «Ջահակիր»ի ներկայացուցիչներուն կողմէ 15 Հոկտեմբեր 1975 թուականին ստորագրուած հրապարակում մըն է, կը նկատուի եզիպտահայ համայնքին անդամներուն համերաշխ գոյակցութեան ծննդեան վկայագիրը:

«ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ»ին հարագատ արտագրութիւնը կը ներկայացնենք յաջորդ երկու էջերով:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Յառաջիկայ Գահիրէի Ազգային Թեմական Ժողովին ամբողջական ընտրութիւններուն համագործակցական ցանկով մը ներկայանալու համար՝ ընդմէջ «Արեւ»ի, «Յուսաբեր»ի եւ «Ջահակիր»ի շրջանակներուն ներկայացուցիչներուն

Նկատի ունենալով Եգիպտոսի Էջմիածնական Թեմի Գահիրէ քաղաքի հայ լուսաւորչական /օրթոտոքս/ համայնքի անդամներուն թուական զգալի նօսրացումը եւ ատոր հետեւանքով գործօն տարրերու նուազումը.

Նկատի ունենալով ազգային գործերու լաւագոյնս մատակարարման անհրաժեշտութիւնը.

Նկատի ունենալով Թեմիս կորսուած խաղաղութիւնը վերահաստատելու կարիքը.

Նկատի ունենալով համագործակցութեան մը ի նպաստ արտայայտուած փափաքները, եւ

Նկատի ունենալով Թեմիս յարմարագոյն ոյժերը աշխատանքի լծելու առաջադրութիւնը,

«Արեւ»ի, «Յուսաբեր»ի եւ «Ջահակիր»ի շրջանակներու ներկայացուցիչները, վերոյիշեալ նպատակները կարենալ իրագործելու համար, խորհրդակցութիւններ ունեցան եւ բանակցութիւններ վարեցին եւ համաձայնեցան հետեւեալ կէտերուն շուրջ.

Ա. Իւրաքանչիւր շրջանակ պիտի մասնակցի իշխանութեան 4 թեկնածուներով, գումար՝ 12 երեսփոխան:

Բ. Մնացեալ 12-ի ընտրութիւնը կողմերու լիակատար հաւանութեամբ յանգեցաւ հետեւեալ ցանկի կազմութեան.

- | | | | |
|---------------|---------|----------------|-----------|
| 1. ԲՐՈՒՏԵԱՆ | ԲԻԻԶԱՆԴ | 7. ՊԸԼԸՔՏԱՆԵԱՆ | ԱՐԹՕ |
| 2. ԹԷՐԶԵԱՆ | ՊԵՐՃ | 8. ՊՕՂՈՍԵԱՆ | ՏԻԳՐԱՆ |
| 3. ԶԱԳԱՐԵԱՆ | ԽՈՍՐՈՎ | 9. ՔԷՕՀՆԷԼԵԱՆ | ՎՐԷԺ |
| 4. ԿԷՎՐԷԿԵԱՆ | ԺԱԳ | 10. ՔԻԼԻՏՃԵԱՆ | ՓՈԼ |
| 5. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ | ՊԵՐՃ | 11. ՔԻԻՐՔՃԵԱՆ | ՀԱՅԿԱԶՈՒՆ |
| 6. ԶԷԶՃԷՆԵԱՆ | ՎԱՀԱՆ | 12. ԲԱՆԵԱՆ | ՆՈՒՊԱՐ |

Որոնցմով կ'ամբողջանայ ներկայ ընտրուելիք համագործակ-

ցական ցանկը՝ 24 երեսփոխան:

Գ. Կողմերը քննեցին նաև թեմս յուզող Գալուստեան Ազգային Վարժարանի հարցը եւ որոշեցին աշխատանք տանիլ վարժարանը պահելու իր ներկայ վիճակով՝ իր երկրորդական բաժինով:

Դ. Աշխատանք տանիլ որ Գալուստեանի Ծնողաց Խորհուրդը իր գործունեութեան ծիրէն դուրս չ'ելլէ՝ շեղելով իր ծրագիր-կանոնագրի տրամադրութիւններէն եւ Ծնողաց Խորհուրդի անունը չշահագործուի դպրոցական հարցերէ զատ այլ նպատակներ հետապնդող աշխատանքներու մէջ:

Ե. Գահիրէի էջմիածնական թեմը համաձայնուած համագործակցական ցանկով մը օժտելէ յետոյ, այնուհետեւ աշխատանք տանիլ ջնջել տալու այն դատը, որ բացուած է Պր. Հայկազուն Քիրքճեանի անունով, Ներքին Գործոց Նախարարութեան դէմ՝ մեր կազմական կանոնագրին տրամադրութեանց ոչ համաձայն եղած հրահանգներուն համար:

Այս համաձայնագիրը եղած է երեք օրինակով, որուն տակ կը ստորագրեն երեք կողմերու ներկայացուցիչները:

«Արեւ»ի շրջանակէն	Յուսաբեր»ի շրջանակէն	«Ջահակիր»ի շրջանակէն
ԵԱԶԸՃԵԱՆ	ԳԱԶԱՆՃԵԱՆ	ԶՕՐԱՅԵԱՆ
ԿԱՐՊԻՍ	ՍԵՊՈՒՇ	ՆՈՒՊԱՐ
(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)
ԹՈՎՄԱՍԵԱՆ	ԹՈՒՇԵԱՆ	ՊԱԼԱՅԵԱՆ
ԺԻՐԱՅՐ	ԵՓՐԵՍ	ԶԱԻԷՆ
(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)
ՏԷՓՈՅԵԱՆ	Տ. ՊԱՅՐԱՍԵԱՆ	ՊԱԼԱՅԵԱՆ
ՎԱՀԱԳՆ	ՍՈՒՐԷՆ	ՍԱՐԳԻՍ
(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)
ՏԷՕՎԼԷԹԵԱՆ	ՍԱՐԳԻՍԵԱՆ Վ.	
ՆՈՐԱՅՐ	ՍԱՐԳԻՍ	
(ստորագրութիւն)	(ստորագրութիւն)	

Գահիրէ, 15 Հոկտեմբեր 1975

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԾԱՆՕԹԱՅՈՒՄ

Կրկնութենէ խուսափելու համար, կը խնդրենք որ ընթերցողը բարի ըլլայ ուշադիր կարդալու ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ-ին բովանդակութիւնը եւ ըստ այդմ հետեւի գործերու ընթացքին:

Ներկայ գլուխին մէջ պիտի փորձենք ներկայացնել թէ ինչ ենթադրեալ պարագաներով (վարկածներով) Հոկտեմբեր 1975-էն ի վեր կը գործէ Համագործակցական Թեմականին դրութիւնը:

Այս տարագումը կ'որդեգրենք ի չգոյէ գրաւոր տուեալներու (ատենագրութիւն կամ հաղորդագրութիւն), բացի մեզի ծանօթ Համաձայնագրէն:

Կ'ուզէինք ընթերցողին տեղեկացնել թէ Համաձայնագիրը, որուն տակ ստորագրած են կուսակցութիւններուն 11 ներկայացուցիչները (փոխան՝ 12-ի), կը կրէ նաեւ անդրանիկ Համագործակցական Թեմական Ժողովին մնացեալ 12 անկուսակցական անդամներուն անունով եւ մականունով սկզբնատառերուն ստորագրութիւնները:

Սոյն Համաձայնագրին բնագրին պատճէնը տեղադրուած է ներկայ գրքոյկին վերջաւորութեան: Իսկ գրքոյկին 6-րդ եւ 7-րդ էջերուն վրայ հրատարակուած Համաձայնագիրը հարազատ արտագրումն է բնօրինակին:

Այժմ, պիտի փորձենք ներկայացնել Համաձայնագրին բովանդակութիւնը եւ անոր որդեգրումին ենթադրեալ պարագաները:

Ինչպէս կը տեսնուի, Համաձայնագիրը երկու էջնոց վաւերաթուղթ մըն է, որ գաղափար մը կու տայ Համաձայնագիրը ստորագրած համայնքին գործերուն այդ ժամանակուան վիճակին մասին:

Այդ Համաձայնագիրը, յստակ եւ ամփոփ ձեւով, հինգ հիմնական ոլորտներու մէջ կը ներկայացնէ խնդրոյ առարկայ հարցերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՈՐԴԵԳՐՈՒՄ

Համագործակցական գործելակերպը, որ սկսած է 1975-ին, դրական երեւոյթ մը կը կր համարուի եւ լուսաբանական գրութեամբ մը պիտի փորձենք ներկայացնել այն հանգամանքները եւ զարգացումները, որոնք մղած են եգիպտահայութիւնը համագործակցական գործելակերպ որդեգրելու:

Սակայն, երեւոյթին մէջ այնքան պարզ թուող այս նպատակին իրականացումը խորքին մէջ շատ դժուար էր:

Արդարեւ, շուրջ 50 տարի առաջ սկիզբ առնող համագործակցական գործելակերպի մասին յստակ տուեալներ գոյութիւն չունին:

Միակ հաստատ բանը այն է, թէ համագործակցական գործելակերպը իրականացնելու հարցով զբաղած է 11 հոգինոց միջկուսակցական մարմին մը, որուն մէջ ներկայացուած են «Արեւ»ի շրջանակը (ՌԱԿ)՝ 4 հոգիով, «Յոսաբեր»ի շրջանակը (ՀՅԴ)՝ 4 հոգիով եւ «Զահակիր»ի շրջանակը (ՍԴՀԿ)՝ 3 հոգիով:¹

Վերոյիշեալ 11 հոգիէն 9 հոգի հրաժեշտ տուած են այս աշխարհին: Մնացած են 2 հոգի՝ տիար Կարպիս Եազրճեան եւ Դոկտ. Սուրէն Պայրամեան:

Առաջինը, երկարամեայ բեղուն հասարակական գործունէութենէ մը վերջ, ներկայիս յառաջացած տարիքի բերումով, ազգային կեանքի մէջ գրեթէ գործօն մասնակցութիւն չունի:

Իսկ Դոկտ. Սուրէն Պայրամեան, բարեբախտաբար, դեռ պատնէշի վրայ է: Ան 48 տարիներ, անընդմէջ, վարած է Թեմական Ժողովի ատենադպիրի պաշտօնը:

Արդ, մեր առջեւ իբր տեղեկութիւններու միակ մատչելի աղբիւր կը մնար վերոյիշեալը, որ նշեալ միջկուսակցական

1 ՌԱԿ-ի 4 ներկայացուցիչներն էին՝ Վահագն Տեփոյեան, Ժիրայր Թովմասեան, Կարպիս Եազրճեան եւ Նորայր Տէօվէթեան:

ՀՅԴ-ի 4 ներկայացուցիչներն էին՝ Եփրեմ Թուշեան, Սարգիս Սարգիսեան, Վարուժան Գազանճեան եւ Դոկտ. Սուրէն Պայրամեան:

ՍԴՀԿ-ի 3 ներկայացուցիչներն էին՝ Սարգիս Պալայեան, Զաւէն Պալայեան եւ Նուպար Զօրայեան:

մարմնին ամենէն կրտսեր անդամն էր:

Մեր առաջին հարցադրումը Դոկտ. Պայրամեանին այն էր, թէ ո՞վ ձեռնարկած է համագործակցական գործելակերպի որդեգրումին եւ արդե՞ք այդ ուղղութեամբ խորհրդակցութիւններ կատարուած են արտաքին կառոյցներու հետ (այսինքն՝ Ս. Էջմիածին կամ կուսակցական վերին մարմիններ):

Ան հաւաստիացուց, թէ նման բան չէ պատահած եւ նախաձեռնութիւնը կը պատկանի կուսակցութիւններու տեղական կառոյցներուն, որոնց կազմած միջկուսակցական մարմինը ժողովները կը գումարէր «Արեւ»-ի խմբագրատան ժողովասրահին մէջ:

Դոկտ. Պայրամեանին ուղղուած մեր երկրորդ հարցադրումը այն մասին էր, թէ միջկուսակցական մարմինին մէջ կողմերուն միջեւ կայացած համաձայնագիրը արձանագրուած եւ ստորագրուած է:

Ան դիտել տուաւ, թէ համաձայնագրին ընդհանուր սկզբունքները վաւերաթուղթի վրայ արձանագրուած են եւ միջկուսակցական մարմնին 11 անդամները անոր վրայ ստորագրած:

Նոյն բովանդակութեամբ երկրորդ փաստաթուղթ մը ստորագրած են «Համագործակցական Ճակատ»ի անդրանիկ Թեմական Ժողովի 24 անդամները:

Սակայն, դժբախտաբար, 50 տարի առաջ ստորագրուած այդ երկու կարեւոր փաստաթուղթերէն ներկայիս ոչ մէկ օրինակ գոյութիւն ունի:

Այդ պարագան, մեր հարցադրումին պատասխանելով, հաստատած են նաեւ միւս երկու կուսակցութիւններուն մերօրեայ ղեկավարները:

Տուեալ կացութեան առջեւ, ուր յստակ տեղեկութիւններ գոյութիւն չունէին, հարկ էր փորձ մը ընել՝ քննարկելու եգիպտահայ համայնքին մէջ 20-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ իրերայաջորդ զարգացումները, հասնելու համար 1975-ին համայնքին մէջ տիրող հոգեբանական վիճակին, որ առաջնորդեց համագործակցական գործելակերպի

որդեգրումին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԴԻՄԱԳՐԱԻԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաձայնագրին մեջ յիշուած է, թէ Համերաշխական Թեմական Ժողովին երեք կուսակցութիւններէն չորսական թեկնածու մասնակցելէ զատ, պիտի նշանակուին տասներկու անկուսակցականներ, այսպիսով ժողովին անդամներուն թիւը պիտի լրանայ քսանչորսի:

Անկուսակցական թեկնածուներուն անունները ճշդուած են, սակայն չէ ճշդուած իրենց պատկանելիութիւնը:

Ուրեմն, տասներկու անկուսակցական երեսփոխաններէն վեցը պիտի ըլլան էջմիածնական², իսկ միւս վեցը՝ համակիր դաշնակցական:

էջմիածնական			դաշնակցական			
4	+	4	+	6		=24
ՌԱԿ		ՍԴՀԿ		համակիր	ՀՅԴ	համակիր

Ի չգոյէ որեւէ վաւերաթուղթի, կ'ենթադրուի որ Համագործակցական Թեմական Ժողովի մը սկզբունքը որդեգրելէ առաջ, երկու կողմերը՝ էջմիածնական եւ դաշնակցական, առանձին ժողովներ գումարած են եւ որոշած են առանձին չստանձնել Թեմական Ժողովին կազմութիւնը:

Համայնք մը, որուն թուաքանակը 75 %-ով նուազած է, ինչպէս մեր համայնքին պարագային, յարմար քատրեր գտնելու դժուարութիւնը կ'ունենայ:

Թերեւս այս է պատճառը որ կողմերէն ոչ մէկը ուզած է ամբողջ Թեմականը առանձին կազմելու պատասխանատուութիւնը ստանձնել:

Թեմական Ժողովը առանձին չկազմելու այլ պատճառ մըն էր

² Էջմիածնական ճակատը կը բաղկանար ՌԱԿի, ՍԴՀԿի անդամներէն եւ անոնց համակիրներէն ու մեծ թիւով անկուսակցականներէ:

Ազգային Իշխանութեան դէմ Գալուստեան Ազգային Վարժարանի Ծնողաց Խորհուրդին շղթայազերծած սուր պայքարը:

Այս վարկածները կրնան բոլորն ալ ճիշդ ըլլալ, բայց այս մասին որեւէ տեղ հաստատ արձանագրութիւն մը գոյութիւն չունի: Համագործակցական Թեմական Ժողովին դիմագրուած հարցերուն ամենէն բարդը, դժուարը, խնդրայարոյցը Գալուստեան Ազգային Վարժարանի Ծնողաց Խորհուրդին գործելակերպն էր:

60-ական թուականներէն սկսեալ եզիպտահայ համայնքը նօսրանալ սկսաւ արտագաղթի հետեւանքով, եւ հետեւաբար, Գահիրէի Գալուստեան եւ Նուպարեան Ազգային զոյգ վարժարաններու աշակերտութեան թիւը զգալիօրէն նուազում արձանագրեց:

Նկատի ունենալով այս պարագան, Գահիրէի Ազգային Իշխանութիւնը որոշած էր երկու վարժարանները միացնել Հելիոպոլսոյ Նուպարեան Ազգային Վարժարանին մէջ, որուն շէնքը, ընդարձակ եւ արդիական կառոյց մը ըլլալուն, նպատակայարմար էր համայնքին աշակերտութիւնը հոն կեդրոնացնելու՝ Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան անուան տակ:

«Սակայն, Գալուստեան Ազգային Վարժարանի Ծնողաց Խորհուրդը դէմ ցցուեցաւ, թէ Ազգային Իշխանութիւնը կ'ուզէ փակել Գալուստեան Ազգային Վարժարանը, հակառակ տրամաբանական բոլոր պատճառներուն:

Ծնողաց Խորհուրդը անդուլ պայքար բացաւ Ազգային Իշխանութեան դէմ, իբր թէ կանխելու համար Գալուստեան Ազգային Վարժարանի փակումը: Այս պայքարը շարունակուեցաւ տասնեակ տարիներ»³ (տեսնել՝ Համաձայնագրին Գ. զլուխին մէջ Գալուստեան Ազգային Վարժարանի վերա-

3 Գալուստեան Ազգային Վարժարանի Ծնողաց Խորհուրդին մասին տրուած տուեալները քաղուած են «Արեւ»-ի նախկին խմբագիր Դոկտ. Աւետիս Եափուճեանի կողմէ գրուած, Պերճ Թերզեանի «Յետադարձ Անդրադարձ» հատորին գրախօսականէն (Գահիրէ, 2024):

բերեալ որոշումը):

Հակառակ նախորդ Ազգային Իշխանութեան առած ճիշդ որոշումին, Համերաշխական Ազգային Իշխանութիւնը, որ 1975-էն վերջ գործի գլուխ եկաւ, որոշեց Գալուստեան Ազգային Վարժարանը իր տեղը պահել, նոյնպէս որոշուեցաւ, առանց Ազգային Իշխանութեան պաշտօնական գիտակցութեան, Գալուստեան Ազգային Վարժարանին մէջ հիմնուած երկրորդական բաժնին գործունէութիւնը շարունակել:

Այս դրութիւնը որդեգրուեցաւ, մինչեւ որ Գալուստեան Ազգային Վարժարանին առջեւ Հոկտեմբեր Վեց անունով կառուցուած բարձրուղիի մը պատճառով քանդուեցան դպրոցին ճակատին գտնուող տողոց եւ աղջկանց բաժինները, ապա աւելի ուշ՝ պետական ծրագրի մը հաշւոյն, 2012-ին քանդուեցաւ նաեւ Գալուստեան մանկապարտէզի շէնքը, որ կը պարփակէր վարժարանին մնացեալ բոլոր բաժինները, - այսինքն 1975-ին առնուած որոշումէն 37 տարի անց, - Գալուստեան Ազգային Վարժարանը Հելիոպոլիս փոխադրուեցաւ՝ միանալով Նուպարեան Ազգային Վարժարանին, եւ միացեալ վարժարանը այդ թուականէն սկսեալ կը գործէ՝ որպէս Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան:

* * *

Կը մնայ կողմերուն միջեւ Թեմական Ժողովի անդամակցութեան համեմատութիւնը:

Անցեալ տասնամեակներուն ընթացքին կայացած Թեմականի ընտրութիւններուն, էջմիածնական ճակատի բարձր համեմատութեամբ յաջողութիւնը եւ մրցորդ կողմին շահած քուէներու համեմատութիւնը, կը գնահատուէր 60 %, ի դէմս 40%-ի, ինչ որ, հաւանաբար, հիմ ծառայած է Համագործակցական Թեմականին մէջ կողմերու միջեւ եղած ար՞ոտարաշխումին:

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Եգիպտահայ համայնքը արտասահմանի առաջատար եւ կազմակերպուած համայնքներէն եղած է, ունի իր ամբողջական ազգային կառոյցները, իր եկեղեցիներով, վարժարաններով, մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններով: Եգիպտահայութիւնը իր երկրորդ հայրենիքին մէջ ունի խոր արմատներ, որոնք կը հասնին մինչեւ Ֆաթիմեան շրջանը 11-12-րդ դար:

Այդ շրջանին Եգիպտոսի մէջ պատահած աղէտները դարմանելու համար, օրուան իսալիֆան Եգիպտոս հրաւիրած էր հայազգի Պատր Էլ Կամալին, որ Եգիպտոս գալով 30 հազար հայ զինուորներով փրկեց երկիրը:

Ֆաթիմեան շրջանէն ասդին, եգիպտահայերու թիւը հետզհետէ նուազած է, սակայն յաջորդող դարերուն միշտ հայկական ներկայութիւն մը գոյութիւն ունեցած է:

Մեր ժամանակներու եգիպտահայ համայնքը սկսած է բազմանալ 1805 թուականէն սկսեալ, երբ Մուհամմէտ Ալի փաշան նշանակուած է Եգիպտոսի կառավարիչ, երկրին մէջ թոյլատու մթնոլորտ մը ստեղծուելով, բազմաթիւ հայեր սկսած են հաստատուիլ Եգիպտոսի մէջ եւ հետզհետէ ստանձնած են բարձր պաշտօններ:

Արդարեւ, 19-րդ դարու ամբողջ տեւողութեան Եգիպտոսի Արտաքին Գործոց Նախարարի պաշտօն վարած են 5 հայեր, որոնց պաշտօնավարութիւնը տեւած է պարբերաբար 65 տարի: Յիշեալ 5 նախարարներուն առաջինը եղած է Պօղոս Պէյ Եուսուֆեանը, որ մտերիմն էր եւ գործակիցը Մուհամմէտ Ալի փաշային:

Ժամանակակից Եգիպտոսի առաջին նախարարապետը եղած է Նուպար Փաշան, որ այդ պաշտօնին գլուխը եկած է 1878-ին:

Եգիպտահայ համայնքը նախապէս եղած է Երուսաղէմի Պատրիարքութեան ենթակայ հովուութիւն մը, որմէ յետոյ Եգիպտոսի հովուութիւնը վերածուած է առաջնորդական

վիճակի մը՝ առաջնորդութեամբ Կիրակոս եպիսկոպոս Մնացականեանի: Իր աշխատանքի շրջանին աւարտին ան վերադարձած է Երուսաղէմ, ուր պատրիարք ընտրուած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Աթոռին:

Եգիպտոսէն մեկնելէն առաջ, պաշտօնական դիմում կատարած է Գաբրիէլ վարդապետ Մարաշցիին առաջնորդական փոխանորդ նշանակելու համար, որ մինչ այդ Աղեքսանդրիոյ հոգեւոր հովիւն էր:

Գաբրիէլ վարդապետ գաղութին այն ժամանակուան թուական աճումը եւ կարիքը նկատի առնելով, 1837-ին նոր եկեղեցի մը կառուցելու կը ձեռնարկէ Պէյն-Էլ-Սուրէյն թաղամասին մէջ, որուն շինութիւնը կ'աւարտի 1839-ին:

Եգիպտահայ գաղութին մեծամեծները կը դիմեն Երուսաղէմի պատրիարքին, որպէսզի Գաբրիէլ վարդապետին եպիսկոպոսական վկայական տրուի: Սսի Միքայէլ կաթողիկոսը եպիսկոպոս կ'օժէ Գաբրիէլ վարդապետը:

Գաբրիէլ եպիսկոպոս, իր առաջնորդական պաշտօնը հաստատելու համար, 1843-ին կը դիմէ Պոլսոյ Յակոբոս Պատրիարքին եւ անոր միջոցով Սուլթան Մահմուտէն կը ստանայ իր առաջնորդական պաշտօնին վաւերացման հրամանագիրը՝ Պէրաաթ, որ Եգիպտոսի թեմը անկախ կը ճանչնար Երուսաղէմի Ս. Յակոբեանց Աթոռին ենթակայութենէն, եւ Գաբրիէլ եպիսկոպոսը կը կոչէր Եգիպտոսի Պատրիարք /Բաթրիք/ եւ առաջնորդարանը՝ Բաթրիքխանէ:

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

1955-էն ի վեր, Գահիրէի իրերայաջորդ Թեմական Ժողովներու ամբողջական (ուրնամեայ) կամ մասնակի (քառամեայ) ընտրութիւնները կը կայանային հակադիր երկու ճակատներու միջեւ՝ մինչեւ 1972 թուականի Թեմական Ժողովի ընտրութիւնները:

Նկատելի է որ այս բոլոր ընտրութիւններուն, այսպէս կոչուած էջմիածնական ճակատը կը ստանար քուէներու

մեծամասնությունը, եւ առանձինն կը կազմէր Ազգային Իշխանությունը: Իսկ դաշնակցականները եւ իրենց համակիրները մաս չէին կազմէր Թեմական Ժողովներուն:

Այս դրութիւնը կրնար շարունակուիլ յաջորդ շրջաններուն եւս, եթէ չըլլար 1975-ին ստորագրուած «ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ»ը, որ համոզուած ենք, թէ հարազատօրէն կը ցոլացնէր համայնքին մէջ գործող երեք ասանդակական կուսակցութիւններուն միասնաբար եւ համերաշխաբար գործելու տրամադրութիւնը:

Նկատի ունենալով որ ներկայ գրառումը կապ ունի եգիպտահայ համայնքին պատմութեան որոշ մէկ ժամանակահատուածին հետ (որ կը սկսի Յուլիս 1952-ին), հարկ է որ յիշենք անկիւնադարձային այն թուականները, որոնց ամբողջութիւնը իր ազդեցութիւնը ունեցած է տուեալ շրջանին եգիպտահայ համայնքին մտածելակերպին, գործելակերպին եւ ապրելակերպին՝ մէկ խօսքով կեանքին հոլովոյթին վրայ:

Ուրեմն, նախ հակիրճ կերպով պիտի անդրադառնանք 1952 Յուլիս 23-ի յեղափոխութենէն սկսեալ Եգիպտոսի անցած քաղաքական կեանքին իրադարձութիւններուն:

Ապա պիտի վերադառնանք եգիպտահայ համայնքին նօսրացումին պատճառներուն եւ հետեւանքներուն:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ, 23 ՅՈՒԼԻՍ 1952

23 Յուլիս 1952-ին Եգիպտոսի մէջ տեղի ունեցաւ յեղափոխութիւն մը, որ թագաւորին պարտադրեց գահը զիջիլ իր մանուկ զակին: Կազմուեցաւ գահի խնամատարներու խորհուրդ մը: Յետագային (Յունիս 1953) միապետութիւնը ջնջուելով, Եգիպտոսը հանրապետութիւն հռչակուեցաւ:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

1952-ին հրապարակուեցաւ Հողային Բարեկարգութեան Օրէնքը, որ անհատներու պարագային մշակելի հողերու սեփականութիւնը կը սահմանափակէր անձ գլուխ 50

ֆետտանով, իսկ ընտանիքի պարագային՝ 200 ֆետտանով⁴:

Այդ օրէնքը ազդեց գլխաւորաբար մեծ հողատերերուն վրայ:

Եթէ հաշուի չառնենք Ազգային Առաջնորդարաններուն (Գահիրէ եւ Ադէքսանդրիա) հողերը, ինչպէս նաեւ Եգիպտոսի մէջ գտնուող ՀԲԸՄ-ի սեփականութիւնը եղող ընդարձակ հողերը, որոնք գրաւումի ենթարկուած էին այլ օրէնքով մը (1963-ի թիւ 15 օրէնք), որ կ'արգիլէր օտարահպատակներուն Եգիպտոսի մէջ մշակելի հող ունենալը, եգիպտահայ համայնքին անդամներէն շատ չնչին տոկոս մը ազդուած է այդ օրէնքէն:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԻՆ ՄԱՍԻՆ

Յեղափոխական կառավարութեան առաջնահերթ մտահոգութիւնը Հողային Բարեկարգութեան Օրէնքն էր, որ հրապարակուեցաւ իշխանափոխութենէն հազիւ մէկուկէս ամիս անց, 9 Սեպտեմբեր 1952-ին:

Հարկ է այս առիթով լուսարանել ընթերցողը, նշելով թէ 1952-ին հրապարակուած Հողային Բարեկարգութեան Օրէնքը ցարդ չէ գործադրուած Ազգային Առաջնորդարանին հողերուն վրայ, շնորհիւ եգիպտական կառավարութեան բարեացակամութեան եւ, օրէնքը հրապարակուելէն ի վեր, շնորհիւ իրերայաջորդ բոլոր ազգային իշխանութիւններուն անդուլ ջանքերուն: Հակառակ երբեմն ստեղծուած դժուար կացութիւններուն, կարելի եղած է մինչեւ հիմա այդ օրէնքին ենթակայ հողերը գրաւումէ փրկել:

Այս առիթով, առ ի լուսարանութիւն, կ'արժէ յիշել թէ Գահիրէի Ազգային Իշխանութիւնը, 2000-ականներու սկիզբի տարիներուն որդեգրած վարչական նոր քաղաքականութեամբ մը, ձեռնարկած է հողային բարեկարգութեան գերատեսչութեան կողմէ գրաւելի հողերէն դուրս մնացած տարածութիւններէն

4 Մէկ ֆետտանը հաւասար է 4200 քառակուսի մէթրի:

բաժիններ վաճառել մասնաւորաբար նկատի ունենալով այն հողերը, որոնք իրենց արժէքին համապատասխան եկամուտ չեն բերեր, կամ կը գտնուին անհատներու կողմէ ոսոնձգութեան ենթակայ շրջաններու մէջ:

Նկատի պէտք է առնել այն պարագան, որ Հողային Բարեկարգութեան Օրէնքը գործադրողները Ազգային Առաջնորդարանին մշակելի եւ խոպան հողերու ամբողջութիւնը միաձոյլ մէկ սեփականութիւն չեն նկատեր, այլ իւրաքանչիւր կտակարարի կամ նուիրատուի կը մօտենան որպէս առանձին եւ անկախ միաւոր, ու այդ հիման վրայ ամեն մէկ կտակարարի կամ նուիրատուի հողէն 200 ֆէտտան մշակելի տարածութիւն գրաւումէ զերծ մնալու իրաւունքը կ'ունենայ:

Այս ձեւով, կտակարարներու թիւին համեմատ, կ'աւելնան գրաւելի հողերէն դուրս մնալիք տարածութիւնները:

Վերը յիշուած հողային բարեկարգութեան պարագաներէն մեկնելով, կարելի է ըսել, թէ եգիպտահայ համայնքին անդամները, ինչպէս նաեւ զանազան մարզերու մէջ գործող կազմակերպութիւնները, առանց մասնաւոր խուճապի, կը շարունակէին իրենց առօրեայ գործունէութիւնները, մինչեւ Ազգայնացումի Օրէնքին հրապարակումը, որ գործադրուեցաւ 20 Յուլիս 1961-էն սկսեալ:

ԻՐԵՐԱՅԱԶՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Իշխանութեան գլուխ գալէ զրեթէ տարի մը ետք, Եգիպտոսի յեղափոխական կառավարութիւնը խտացեալ բանակցութիւններ կը վարէր Սուէզի Զրանցքի շրջանին մէջ կայք հաստատած անգլիական գրաւման ուժերը Եգիպտոսէն հեռացնելու ուղղութեամբ եւ 1956-ին կը յաջողէր իրականացնել պարպումը:

Եգիպտական կառավարութիւնը ծրագրած էր Ասուանի մէջ բարձր ջրամբար մը կառուցանել, որուն համար Փետրուար 1956-ին Շինութեան Եւ Զարգացման Միջազգային Դրամատունը խոստացած էր հարկ եղած վարկերը տրամադրել:

Սակայն, Միացեալ Նահանգները եւ Անգլիոյ Միացեալ

Թագաւորութիւնը նոյն տարուան Յուլիսին ետ կոչեցին այդ խոստումը, որուն որպէս պատասխան եգիպտական կառավարութիւնը նոյն ամսուան ընթացքին ազգայնացուց Սուէզի Ջրանցքը, զայն յանձանձող ընկերութեան ունեցած մենաշնորհին ժամկէտէն շատ առաջ:

Այդ ընկերութեան բաժնետէրերը չհանդուրժեցին եգիպտական կառավարութեան առած այս խիզախ որոշումին եւ ճնշում բանեցուցին Ֆրանսայի եւ Անգլիոյ Միացեալ Թագաւորութեան կառավարութիւններուն վրայ, որուն հետեւանքով յիշեալ երկու պետութիւնները, որոնց միացաւ նաեւ Իսրայէլը, Հոկտեմբեր 1956-ին յարձակեցան Եգիպտոսի վրայ եւ գրաւեցին Փոր-Սայիտ քաղաքը:

Այս յարձակումը ակնկալուած արդիւնքը չունեցաւ, շնորհիւ յարձակող ուժերուն դէմ Սովետ Միութեան սպառնալից վերջնագրին եւ Միացեալ Նահանգներու գաղջ վերաբերմունքին:

Տուեալ պայմաններուն տակ յարձակող ուժերը ստիպուած եղան քաշուիլ Եգիպտոսէն:

Այդ յարձակումին որպէս պատասխան եգիպտական կառավարութիւնը ազգայնացուց Եգիպտոսի մէջ գործող բոլոր անգլիական եւ ֆրանսական ընկերութիւնները:

Նշեալ քայլին յաջորդեց բոլոր օտար ընկերութիւններու եգիպտականացումը: Իսկ, Յուլիս 1961-ին կառավարութիւնը ազգայնացուց երկրին մէջ գործող եգիպտական բոլոր մեծ ձեռնարկութիւնները:

ՄԵԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԻ (ՊԵՏԱԿԱՆԱՅՈՒՄԻ) ՕՐԷՆՔԸ

Ընկերվարական այս օրէնքներուն հետեւանքով երկիրը տնտեսական ցնցում մը անցուց: Գրաւեալ ձեռնարկութիւններուն մէջ սկսան գործադրուիլ կառավարական պաշտօնէութեան վրայ գործադրուող աշխատանքի պայմանները, ուր

պաշտօնէութիւնը պիտի աշխատէր սահմանափակ ամսակա-
նով եւ սահմանափակ յառաջացումով:

Այս դրութիւնը կը կասեցնէր պաշտօնէաներու անձնական
կարողութիւններուն քաջալերանքը եւ կ'արգելակէր անոնց
յառաջացումը:

Հարկ է նշել, թէ 1961-ի Ազգայնացման Օրէնքը կը վերաբերէր
բոլոր դրամատուներուն, ապահովագրական ընկերութիւննե-
րուն եւ օրէնքին կցեալ ցանկին վրայ երեւցող այլ հսկայ
ձեռնարկութիւններուն: Սակայն, չենք գիտեր ինչպէս, կարգ մը
հազուադէպ պարագաներու, նեղ մասնագիտութիւն ունեցող
փոքր հաստատութիւններ եւս ազգայնացուած են, ինչ որ
հասկնալի տազնապ յառաջացուցած է չազգայնացուած փոքր
հաստատութիւններու տէրերուն մօտ, ենթադրելով որ իրենք ալ
կրնան նոյն վիճակին մատնուիլ:

Ազգայնացումի Օրէնքին պատճառով բազմահազար
եգիպտացիներ, որոնց կարգին նաեւ ստուարաթիւ եգիպտա-
հայեր, ստիպուած եղան արտասահման գաղթել եւ իրենց կեան-
քը վերսկսիլ այլ երկիրներու մէջ, գլխաւորաբար Գանատա,
Աւստրալիա, Միացեալ Նահանգներ եւ Արեւմտեան Եւրոպայի
ու Հարաւային Ամերիկայի կարգ մը երկիրներ:

Կ'արժէ նշել, թէ 1962-1963, 1964 եւ 1965 տարիներուն արտա-
գաղթող հայերէն համեմատաբար փոքր թիւ մը, շուրջ 1000 հոգի
կամ քիչ մը աւելի, ներգաղթած է Հայաստան:

Զանգուածային այս արտագաղթը, որ սկսաւ անցեալ դարու
60-ականներուն սկիզբը, իր ժխտական ազդեցութիւնը ունեցաւ
համայնքային եւ միութենական կառոյցներուն վրայ, որոնք
կորսնցուցին իրենց փորձառու ղեկավար քատրերուն
մեծամասնութիւնը, ինչպէս նաեւ անդամներու հսկայ թիւ մը:

ՆՈՐ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Հակառակ Յուլիս 1952-ի յեղափոխութենէն մինչեւ Յուլիս
1961-ին հրապարակուած ընկերվարական օրէնքներուն եւ

երկրին մեջ պատահող քաղաքական իրադարձություններուն, եգիպտահայերը՝ իբրև երկրին հաւատարիմ եւ օրինապահ քաղաքացիներ, լուստեսութեամբ կը նայէին ապագային: Ասոր փաստը այն է, որ 1952-ի յեղափոխութեան յաջորդող առաջին տասնամեակին եգիպտահայ համայնքին մեջ կը կառուցուէին համայնական տարաբնոյթ գործածութիւններու համար 10 նոր կառոյցներ, որոնց մանրամասնութիւնները կու տանք ստորեւ, ինչ որ կը յուշէ կազմակերպուած, բարգաւաճ, ծաղկուն եւ ապագային համար նախատեսութիւններ ընող համայնքի մը առկայութիւնը:

ՑՈՒՑԱԿ

1952-1961 ՇՐՋԱՆԻՆ ՇԻՆՈՒԱԾ ՆՈՐ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ

1952-էն գործող Ամենայն Սրբոց Գերեզմանատունը, Հելիոպոլիս:

1953-ին հիմնուած Արգարեան Դարմանատունը, որ կը գտնուէր Ազգային Առաջնորդարանին կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին շրջափակին մեջ (այժմ՝ Ազգային Առաջնորդարանի Թորգոմեան Մատենադարան):

1953-էն Հելիոպոլսոյ մեջ գործող Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Վարժարանը:

1955-էն գործող Ամենայն Սրբոց Մատուռը, Հելիոպոլիս:

1955-էն սկսեալ գործող Հայ Գեղարուեստասիրաց Միութեան նոր կեդրոնը:

1958-ին հիմնուած ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզական ակումբը, Հելիոպոլիս:

1959-ին կառուցուած Նուպարեան Ազգային Վարժարանի նոր շէնքը, Հելիոպոլիս:

1960-ին հիմնուած Յուսաբեր Ակումբը, Հելիոպոլիս:

1960-ին հիմնուած Վիեննական Միւսթարեան Վարժարանի նոր շէնքը, Հելիոպոլիս:

1961-ին հիմնուած Այծեմնիկ Տիկնանց Միութեան Կարապետ աղա Արիկեան Հանգստեան Տունը, Հելիոպոլիս:

Վերը ներկայացուած տեղեկութիւնները յստակ ցուցանիշներ են, թէ համայնքը այդ տարիներուն (1952-1961) խուճապի մէջ չէր:

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Յաջորդ պատերազմը տեղի ունեցաւ 5 Յունիս 1967-ին, երբ իսրայէլեան ուժերը Եգիպտոսի արեւելեան սահմանին վրայ լայնածիր յարձակումով մը գրաւեցին հսկայ տարածութիւններ՝ հասնելով մինչեւ Սուէզի Ջրանցքին արեւելեան մատոյցները:

Այս պատերազմին արդիւնքը չափազանց ծանր էր եգիպտացի ժողովուրդին համար, ինչ որ մղեց զայն կազմակերպուելու եւ բանակը մասնագիտացած մարդուժով եւ նորագոյն զէնքերով օժտելու:

Առնուած այս քայլերով, կարելի եղաւ ետ մղել իսրայէլեան ուժերը եւ վերականգնել Եգիպտոսի կարելորդ դերակատարութիւնը Միջին Արեւելքի այս շրջանին մէջ՝ շնորհիւ 6 Հոկտեմբեր 1973-ին Եոմ ֆիբուրի օրով Եգիպտոսի կողմէ Իսրայէլի դէմ շղթայազերծուած պատերազմին:

Զմոռնանք որ 28 Սեպտեմբեր 1970-ին մահացաւ Եգիպտոսի առասպելական նախագահը՝ Կամալ Ապտէլ Նասրը, որուն յաջորդեց նախագահ Անուար Էլ Սատաթը:

Նախագահ Սատաթին կ'երթայ բանակը վերակազմակերպելու եւ պատերազմի ազդանշանը տալու պատիւը:

Նոր նախագահին օրով Եգիպտոս որդեգրեց գործնական եւ թոյլատու տնտեսական համակարգ մը, որուն շնորհիւ անհատական նախաձեռնութիւնները կրցան նոր տնտեսութիւն ստեղծել, վերստին գործի գլուխ եկան եգիպտացի նախաձեռնողներ, որոնց մէջ քիչ չէր միլիոնատերերու թիւը:

Իրերու բնական ընթացքով, Եգիպտոս մնացած հայ համայնքին անդամներն ալ կրցան հասնիլ յաջող դիրքերու:

ՄԵՐ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Գահիրեի հայ համայնքին վերաբերեալ պաշտօնական մարդահամարի չգոյութեան պատճառով, ստիպուած ենք դիմել այլ միջոցներու:

Յաջորդ տողերուն մէջ կը ներկայացնենք երեք աղբիւրներ, որոնց ապաւինած ենք մեր ուսումնասիրութիւնը առաջ տանելու համար:

Ընթերցողին կ'ուզէինք տեղեկացնել, թէ այս երեք աղբիւրները կ'ուսումնասիրենք՝ հասնելու համար եգիպտահայ համայնքին թուաքանակին նուագումի տոկոսին:

Այդ ուղղութեամբ հաշուարկումները կատարուած են (1952, 1962 եւ 1972) երեք առանցքային տարիներու տուեալներուն վրայ:

1952 տարին կը յատկանշուի Յուլիս 23-ի յեղափոխութեամբ եւ նոյն տարուան Սեպտեմբերին հրապարակուած Հողային Բարեկարգութեան Օրէնքով:

1962 տարւոյն սկիզբը կը ներկայացնէ 1961 Յուլիսին Ազգայնացման Օրէնքին հրապարակումէն հինգ ամիս վերջ, երկրին մէջ տիրող արտագաղթի խուճապի վիճակին առկայութիւնը, ինչ որ քանդիչ գործօն մը եղաւ եգիպտահայ համայնքին ահաւոր համեմատութեամբ նուագումին մէջ:

1972-ը այն տարին է, որ Գահիրեի հայ համայնքին մէջ, վերջին անգամ ըլլալով, Թեմական Ժողովի ընտրութիւնները կայացան երկու հակադիր կողմերու ճակատումով:

1975-էն սկսեալ, յաջորդական Թեմական Ժողովներու ընտրութիւնները տեղի ունեցած են համերաշխ մթնոլորտի մէջ:

Վերեւ յիշուած երեք աղբիւրներէն հետեւեալ երկուքը կը գտնուին Գահիրեի Ազգային Առաջնորդարանին մօտ.

1- ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏՈՄԱՐՆԵՐՈՒ՝ 1952-1975 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ:

2- 1946-1972 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ ԳԱՀԻՐԷԻ ԹԵՄԱ-ԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՆՁԵՐՈՒ ԹՈՒԱՔԱՆԱԿՆԵՐԸ:

Ստորև կը ներկայացնենք մեր ընտրած աղբիւրներուն երկուքէն քաղուած տուեալները:

**1- ՉԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՏՈՄԱՐՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ 1952-1975 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ
ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏՈՒԵԱԼՆԵՐ**

Տարի	Մկրտ.	Ամուսն.	Տարի	Մկրտ.	Ամուսն.
1952	155	75	1964	74	39
1953	134	73	1965	59	40
1954	148	68	1966	44	26
1955	141	73	1967	47	18
1956	137	62	1968	33	18
1957	143	58	1969	25	30
1958	120	60	1970	20	18
1959	110	65	1971	36	15
1960	139	52	1972	24	16
1961	105	62	1973	13	13
1962	97	51	1974	18	9
1963	76	59	1975	21	17

1ա – ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարի	1952	1962	1972
Մկրտութիւններ	155	97	24
Տոկոսային համեմատութիւն	100	62	15.5

Այս թիւերուն վրայ պարզ ակնարկ մը նետելով, կարելի է եզրակացնել, թէ մկրտութիւններու պարագային, եթէ 1952 տարին հիմ առնենք (100), 1962 տարուան մկրտութիւնները (ծնունդները) (97), կը ներկայացնեն մկրտութիւններու

(ծնունդներու) թիւին մէջ 38% անկում մը:

Իսկ եթէ բաղդատենք 1972-ի մկրտութիւններու թիւը (24), 1952-ի համեմատ կ'ունենանք 15.5% տոկոսի համեմատութիւն մը, ինչ որ ցոյց կու տայ 1952 տարուան մկրտութիւններուն դիմաց 84. 5% տոկոսի անկում մը:

1 բ – ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամուսնութիւններու պարագային ունինք հետեւեալ մանրամասնութիւնները.

Տարի	1952	1962	1972
Ամուսնութիւններ	75	51	16
Տոկոսային համեմատութիւն	100	68	79

Իսկ 1972-ի ամուսնութիւնները (16) երբ համեմատենք 1952-ի ամուսնութիւններուն թիւին հետ (75) կ'ունենանք 79% անկում մը:

Այս թիւերը ցոյց կու տան, թէ 1952-ի տուեալները հիմ առնելով (100), 1962-ին ամուսնութիւնները (51) կը ներկայացնեն 1952-ի ամուսնութիւններուն համեմատ 32% անկում մը:

Ամփոփելով վերեւ տրուած մկրտութիւններու եւ ամուսնութիւններու թուաքանակները, կը պարզուի, թէ 1952-էն 1972 երկարող քսանամեակին եղած են հետեւեալ տոկոսային անկումները

1952	1972		Տոկոսային անկում
155	16	ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ	84.5%
75	24	ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ	79%

$$\text{Գումար} \quad 163.5 \div 2 = 81.75\%$$

Այսպէս, մկրտութիւններու եւ ամուսնութիւններու անկման միջին տոկոսը եղած է 81.75%:

Հետևաբար, համայնքին ընդհանուր թուաքանակը կարելի է այդ տոկոսով նուազած համարել:

Նկատի պետք է առնել որ 1972-էն սադին արտագաղթը շարունակուած է աւելի փոքր թափով, որովհետեւ համայնքին թուաքանակը արդէն նուազած էր:

Հետևաբար, նոյն տրամաբանութեամբ պետք է հաշուի առնել որ Հոկտեմբեր 1975-ին համայնքին թուաքանակը աւելի եւս նուազած էր, բաղդատած 1972-ի թուաքանակին հետ:

2- ՑՈՒՑԱԿ ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒՆ ԹՈՒԱՔԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Թուական	Մասնակցելու իրաւունք ունեցողներ	Մասնակցողներ
27 Յունուար, 1946	930	718
13 Փետրուար, 1955	1783	1780
7 Մայիս, 1961	2280	1078
22 Յունուար, 1967	x	577
7 Մայիս, 1972	891	713

Վերելի տուեալներէն նկատի պետք է առնենք, թէ ընտրութիւններուն զանազան տարիներուն մասնակցած են տարբեր թուաքանակով եւ համեմատութեամբ քուէարկողներ:

Այս մասին մանրամասնօրէն պիտի անդրադառնանք աւելի ուշ:

* * *

Ներկայացուած այս երկու աղբիւրներէն զատ կ'ապաւինինք.

3 - Հայրենի գիտաշխատող Դոկտ. Տիգրան Ղանալանեանի հմուտ եւ խղճամիտ մօտեցումով հեղինակած գիրքին, որուն

խորագիրն է «Հայերի Արտագաղթը Եգիպտոսից 1950-1970-ական Թուականներին»:

Դոկտ. Ղանալանեան⁵, հայերուն Եգիպտոսէն արտագաղթի մասին իր գիրքը ներկայացուցած է 2018-ին Գահիրէի մէջ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին կողմէ կազմակերպուած «Եգիպտոսի, Սուտանի Եւ Եթովպիոյ Հայերը» գիտաժողովին՝ աջակցութեամբ Գահիրէի Ազգային Առաջնորդարանին:

Այդ գիտաժողովը, ինչպէս որ նախատեսուած էր, կայացած է երկու հանգրուանով (12-13 Ապրիլ) Գահիրէ եւ (28-30 Մայիս) Պէրուր:

Հետագային այս երկու գիտաժողովներուն ելոյթ ունեցողներուն ներկայացուցած ուսումնասիրութիւնները, Հայկազեան Համալսարանը 2022-ին Պէրուրի մէջ հրատարակած է երկու հատորով, որոնցմէ առաջինին մէջ տեղադրուած է սոյն գիրքը:

Անկախաբար վերոյիշեալ հրատարակութենէն, Դոկտ. Տիգրան Ղանալանեանի այս ուսումնասիրութիւնը լոյս տեսած է 23 էջնոց առանձնատիպով մը, որուն բովանդակութիւնը փոքր տարբերութիւններով յար եւ նման է գիտաժողովին վերաբերեալ առաջին հատորին մէջ լոյս տեսած օրինակին:

Այսպէս, ան 1945 թուականին եգիպտահայերու թիւը կը հաշուէ 30 000 հոգի:

Յաջորդ տուեալը, որ կու տայ, կը վերաբերի եգիպտահայ հայրենադարձ պատմաբան, Յ. Թօփուզեանի, որ 1947-ին եգիպտահայերու թիւը կը գնահատէ 35 000:

Դոկտ. Ղանալանեան, 1955 թուին՝ մօտաւոր տուեալներով եգիպտահայութեան թիւը կը գնահատէ 38 000, ապա կը մէջբերէ լիբանանահայ մտաւորական Կարօ Գէորգեանի արձանագ-

5 Ներկայիս ԵՊՀ-ի Հայագիտական Հետազոտութիւններու Հիմնարկի Սփիւռքագիտական Հետազոտութիւններու Բաժնի գիտաշխատող: Դոկտ. Ղանալանեան ԵՊՀ-ի Հայոց Պատմութեան ամբիոնէն պաշտպանած է իր թեկնածուականը՝ «Սփիւռքի Ներքին Տեղաշարժերը 1945-1988 Թուականներուն» նիւթով: Ան նոյնպէս վարած է բազմաթիւ գիտական կարեւոր պաշտօններ:

րութիւնը, ըստ որուն եգիպտահայութեան թիւը կը հասնէր 38 - 39 000-ի:

Հետաքրքրականն այն է որ Դոկտ. Տիգրան Ղանալանեան այս գործին մէջ նկատի ունեցած է ո՛չ միայն նշուած շրջանի ընթացքին Եգիպտոսէն արտագաղթած հայերուն թուաքանակը, այլ նաեւ մանրամասնօրէն արտագաղթողներուն նոր համայնքներուն մէջ ունեցած գործունէութիւնը:

* * *

Հեղինակը իր գիրքը կը սկսի զանազան շրջաններու եգիպտահայ համայնքին թուաքանակները յիշելով:

Դոկտ. Ղանալանեան կը հաւաստէ, թէ 1950-1960-ական թուականներուն Եգիպտոսի մէջ տեղի ունեցած են քաղաքական կարեւորագոյն փոփոխութիւններ, որոնք էապէս ազդած են նաեւ հայ համայնքին կենսագործունէութեան վրայ:

Սոյն գիրքը լեցուն է եգիպտահայութեան արտագաղթին վերաբերեալ բազմաթիւ մանրամասնութիւններով, որոնք հիմնականին մէջ առնչութիւն չունին մեր ուսումնասիրութեան գլխաւոր նպատակին հետ, որ է ճշդել եգիպտահայութեան թիւը 1950-ականներու սկիզբը:

Հետեւաբար, զանց պիտի առնենք այս գիրքին մէջ նշուած Ճորճ Մարտիկեանի Եգիպտոս հերթական այցելութիւններուն մանրամասնութիւնները, պետական մարդոց հետ իր տեսակցութիւնները: Նոյնպէս, զանց պիտի առնենք ԱՆՉԱ-ի Եգիպտոսի մէջ ունեցած գործունէութեան վերաբերեալ տուեալները:

Ասոնցմէ զատ, ան մէջբերումներ կատարած է այն տեղեկագիրներէն, որոնք ԽՍՀՄ-ի դեսպանատուները պատրաստած են այն երկիրներուն մէջ, ուր արտագաղթած են եգիպտահայերը:

Թիւերու լեզուով խօսելով, Դոկտ. Ղանալանեան կը ճշդէ, թէ մինչեւ 1970 Եգիպտոսէն արտագաղթած են 20 000 հայեր: Ապա, կ'աւելցնէ թէ, եթէ 1950-ականներուն սկիզբը եգիպտահայերու թիւը կը հասնէր 30-40 հազարի, 1970-ականներուն,

արտագաղթողներուն մեկնումէն վերջ, մնացած էին 12 000 եգիպտահայեր:

Հեղինակը իր գիրքին առանձնատիպ տարբերակին մէջ (էջ 14), կը գրէ հետեւեալը. «Այսպիսով, Եգիպտոսից արտագաղթեց հայերի շուրջ 3/4 մասը»:

Դոկտ. Ղանալանեան, արտագաղթի հետեւանքով եգիպտահայութեան նուազումի տոկոսին մասին ուսումնասիրութիւնը կ'եզրափակէ, թէ համայնքին թուաքանակը նուազած է 75% տոկոսով, ինչ որ շատ մօտ է Ազգային Առաջնորդարանէն առնուած տուեալներուն վրայ հիմնուած մեր ուսումնասիրութեան, որուն արդիւնքն է 81.75% տոկոսի նուազում մը:

Հետեւաբար, 75% նուազումը հիմ առնելով, կրնանք համարել, թէ 15 Հոկտեմբեր 1975-ին երեք աւանդական հայ կուսակցութիւններուն միջեւ «ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ»-ը ստորագրուած ժամանակ եգիպտահայ համայնքին թուաքանակը 7-8 000 էր կամ նուազ՝ դանդաղ, բայց չկանգնող արտագաղթին հետեւանքով:

Այժմ պիտի անդրադառնանք այն մթնոլորտին, որուն ենթարկուեցաւ եգիպտահայ համայնքը Յուլիս 1961-էն սկսեալ մինչեւ անցեալ դարու 70-ական թուականներուն սկիզբի տարիները:

20-րդ դարու երկրորդ կիսուն եգիպտահայ համայնքին դիմագրաւած դժուարութիւններուն ծանօթանալէ յետոյ, հարկ է որ ըմբռնենք, թէ ան իր բոլոր հատուածներով խռովայոյզ հոգեբանական վիճակի մը մէջ կ'ապրէր:

Վիճակը անորոշ էր թէ՛ համայնքին զաւակներուն, թէ՛ համայնքին մէջ գործող բոլոր կառոյցներուն համար:

Այս պատկերացումը կը վերաբերի համայնքին վրայ ազդած արտաքին գործօններուն:

Նշեալ դժուարութիւններուն բարձրակէտը կը հանդիսանար եգիպտական մեծ հաստատութիւններուն Ազգայնացման Օրէնքը, որուն ստեղծած մթնոլորտը կը մտահոգէր բնիկ

եզիպտացի մեր հայրենակիցները, ինչպես նաև եզիպտահայ համայնքին ստուարաթիւ անդամները:

Այս մթնոլորտին մէջ, բնական էր, որ մեծ թիւով մարդիկ, որոնց շարքին եզիպտահայ համայնքէն անդամներ, զանգուածային արտագաղթի դիմէին:

Հետեւանքը, սակայն, եղաւ շատ ճակատագրական, քանի որ կարճ ժամանակի ընթացքին համայնքին թուաքանակը, ինչպէս ըսուեցաւ, 75% տոկոսով նուազեցաւ:

Հոս խօսքը կը վերաբերի 1950-ական թուականներուն սկիզբները՝ 30-40 հազար գնահատուող եզիպտահայ համայնքին, որուն թուաքանակը՝ 1970-ական թուականներուն սկիզբները, շատ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին, արագօրէն նուազեցաւ եւ, ինչպէս յիշուեցաւ, հասաւ 7-8 հազարի:

ԳԱՀԻՐԷԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒ ԹՈՒԱՔԱՆԱԿԻՆ ՏԱՐՈՒԲԵՐՈՒՄԸ

Կացութիւնը լաւ ըմբռնելու համար, հարկ է քննական աչքով կարդալ Թեմական ժողովներու ընտրութիւններուն մասնակցողներուն թուաքանակը:

Եթէ ակնարկ մը նետենք Գահիրէի Թեմական ժողովներու ընտրութիւններուն թուականներուն վրայ (էջ 24), պիտի տեսնենք որ ամենէն շատ մասնակցութիւնը եղած է Փետրուար 1955-ի ընտրութիւններուն, ուր ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք ունեցողներուն թիւն էր 1783 քուէարկող: Իսկ ընտրութեան մասնակցողներուն թիւը եղած է 1780 հոգի: Այլ խօսքով, միայն երեք հոգի չէին գործածած իրենց քուէարկութեան իրաւունքը:

Նկատելի է որ Յունուար 1946-էն մինչեւ Մայիս 1972 Թեմական ժողովներուն ընտրութեան իրենց քուէարկելու իրաւունքը չգործածողներուն թիւը անհամեմատօրէն աւելի բարձր է, քան 1955-ին իրենց քուէարկութեան իրաւունքը

չգործածողները, որոնք՝ ինչպես նշեցինք, երեք հոգի էին միայն:

Այսպես, Յունուար 1946-ին 930 ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցողներէն չեն ներկայացած 212 հոգի: Իսկ Մայիս 1961-ի 2280 ընտրելու իրաւունք ունեցողներէն ընտրութեան չեն մասնակցած 1202 հոգի:

Նոյնպէս, Մայիս 1972-ի ընտրութիւններուն 891 ընտրելու իրաւունք ունեցողներէն չեն ներկայացած 178 հոգի:

Բայց ինչ էր այս երեւոյթին դրդապատճառը:

Հոս հարկ պիտի ըլլայ փակագիծ մը բանալ՝ լուսաբանելու մեր առջեւ պարզուող պարագաները:

ՀՊԱՆՑՖԿ ԱԿՆԱՐԿ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԹԵՄԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Յունիս 1952-ին վախճանեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանը, որմէ յետոյ Կիլիկեան Աթոռը թափուր մնաց մինչեւ Փետրուար 1956:

Չենք ուզեր անդրադառնալ այդ շրջանի Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատմութիւններուն, ոչ ալ նոյն շրջանին Ս. Էջմիածնի մէջ Հոկտեմբեր 1955-ին ընտրուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ին՝ Փետրուար 1956-ին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, եւ անմիջապէս յետոյ Գահիրէ այցելութիւններուն մասին:

Այդ պատմութիւնները կապ չունին ներկայ գրառումին հետ: Սակայն, ստիպուած անոնց կ'անդրադառնանք, կարգ մը կէտեր լուսաբանելու համար:

1955 Փետրուարին, Գահիրէի Թեմական ընտրութիւններուն շրջանին, զօրաւոր տարաձայնութիւն մը կը շրջէր, թէ 1956 Փետրուարին Կիլիկիոյ թափուր արժողին համար կաթողիկոս

մը պիտի ընտրուէր:

Դաշնակցականները եւ իրենց համակիր պատգամաւորներու խմբաւորումը, կաթողիկոսի ընտրութեան ժողովին մէջ մեծամասնութիւն ըլլալով, պիտի ընտրէին իրենց թեկնածուն: Ան կաթողիկոսական օծումէն վերջ պիտի գործադրէր դաշնակցութեան ծրագիրը, որ կը նախատեսէր կարգ մը արտասահմանեան թեմերու միացումը Կիլիկիոյ Աթոռին:

Հետեւաբար, Փետրուար 1955-ի Գահիրէի Թեմական ընտրութիւններուն, երկու հակադիր ճակատները իրենց կարելի առաւելագոյնը ըրած էին, ընտրելու իրաւունք ունեցող իրենց բոլոր համակիրները ընտրական սնտուկ առաջնորդելու՝ ի ինդիր ձեռք առնելու Ազգային Իշխանութիւնը. մին թեմը պահելու համար իր աւանդական էջմիածնականութեան մէջ, միւսը թեմը միացնելու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Համաշխարհային Ա. Պատերազմը սկսելէ վերջ, եգիպտահայ համայնքը ենթակայ եղաւ Ս. Էջմիածնի հովանաւորութեան:

Իրողութիւն է որ Դաշնակցութիւնը Եգիպտոսի մէջ բացայայտօրէն չէր խօսեր եգիպտահայ թեմը Կիլիկեան Աթոռին միացնելու մասին: Սակայն, արտասահմանեան այլ համայնքներու մէջ իր ունեցած դիրքորոշումը կը թելադրէր, Եգիպտոսի մէջ ընտրութիւնները շահելու պարագային, իր բռնելիք ընթացքը:

Այս գնահատումին ճիշդ ըլլալը կը փաստեն 1956 Փետրուարէն յետոյ, այլ թեմերու մէջ պատահած իրադարձութիւնները:

Արդարեւ, պէտք չէ մոռնալ որ Գահիրէի Թեմական ընտրութիւններէն յետոյ, գորս շահեցաւ էջմիածնական ճակատը, 1956 Փետրուարին, ըստ ծրագրուածին, տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին համար նոր կաթողիկոսի մը ընտրութիւնը:

Այս ընտրութեան յաջորդեց բազմաթիւ կիլիկեան նոր թեմերու հաստատումը, որոնք բաժնուեցան մինչ այդ գոյութիւն ունեցող էջմիածնական թեմերէն, որոնց ամբողջութիւնը

խզուեցաւ Ս. Էջմիածնէն:

Նոր թեմերը, բնականաբար, մաս կազմեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմական համակարգին:

1955-էն մինչեւ 1972 թուականը, Գահիրէի մէջ կայացած Թեմականի բոլոր ընտրութիւններուն Էջմիածնական ճակատը շահած է, կարծէք խնայելու մեր համայնքին՝ այլ համայնքներու մէջ տարուող եկեղեցական ներքին տագնապալի պայքարները:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻՆ ՅԱԶՈՐԴՈՂ ՅԱԶՈՂ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Եգիպտահայութեան թուաքանակը, ինչպէս նշեցինք, սկսած էր յաւելում արձանագրել եւ իր առաւելագոյնին հասնիլ նախատեղեւնեան տարիներուն:

Այս շրջանին, Մեծ Եղեռնի հետեւանքով, գաղթականներու նոր ալիքներ աւելցուցած են եգիպտահայութեան թիւը, որ գրեթէ իր լրումին հասած է 1920-ական տարիներուն վերջերուն:

Համայնքին հին եւ նոր անդամները բաժնուած էին երկու հակադիր ճակատներու, որոնք իրենց ուղղութիւններով եւ ըմբռնումներով իրարու կը հակասէին:

Իրերու այս վիճակը այսպէս շարունակուեցաւ մինչեւ 1972, որմէ յետոյ 1975-էն սկսեալ, Համագործակցական Ճակատի գործունէութիւնը որդեգրուեցաւ:

Այդ թուականին սկսած գործունէութիւնը տեւեց ամբողջ յիսնամեակ մը:

Եթէ քննենք ներկայիս գործող Համագործակցական իշխանութեան պարագան, պիտի նկատենք, թէ 1975-էն մինչեւ 2025 տեւող այս իշխանութեան 24 անդամներէն մնացած են միայն երեք հոգի՝ յանձինս Տիար Կարպիս Եազրճեանի, Դոկտ. Սուրէն Պայրամեանի եւ ստորագրեալիս:

Յիշեալ երեք անձերը մաս չեն կազմեր գործող Ազգային Իշխանութեան:

Այս երեւոյթը ցոյց կու տայ, թէ ներկայիս գործի վրայ է բոլորովին նոր սերունդ մը, որ նոր ըմբռնումներով կը

շարունակէ յիսուն տարի առաջ կազմուած ճակատը:

ԵԶՐԱՓՈՒՄ

Այս գրքոյկը կարդացողը պիտի անդրադառնայ որ կը գտնուի խոր արմատներ ունեցող համայնքի մը պատմութեան առջեւ, որուն առկայութիւնը կ'երկարի մինչեւ ֆաթիմեան շրջան:

Հետեւաբար, ան ապրած է ստեղծագործած է տարբեր ժամանակներու մէջ՝ բերելով երկրին կարելոր ներդրում, նայած իր թիւին:

Այսօրուան եգիպտահայ համայնքը պատկերացում մը կու տայ անցեալի իր կենցաղին մասին:

Եգիպտահայերը իբրեւ փոքրամասնութիւն, ունեցած են իրենց կարելոր դերը երկրին բարգաւաճումին մէջ՝ մանաւանդ 19-րդ դարու ամբողջ ընթացքին եւ 20-րդ դարու առաջին երկու տասնամեակներուն:

1920-ականներէն սկսեալ համայնքը բաժնուած էր երկու հակադիր ճակատներու, որոնք չէին հանդուրժեր զիրար:

1975-ին երեք կուսակցութիւններու միջեւ ստորագրուած համաձայնագրով նոր շրջան մը կը սկսէր:

Երեւոյթը յատկանշական էր ու խրախուսիչ, երբ փոխադարձ հասկացողութեամբ երեք տարբեր կուսակցութիւններու անդամներ միասնաբար սկսան գործել:

Իրականութեան մէջ համերաշխ գոյակցութեան ստեղծումը եւ ամբողջ յիսուն տարի տեւողութիւնը հրաշք մըն է:

Հարկ է նշել որ ներկայ համայնքը ինքնաբար է եւ կարիքը չունի որեւէ արտաքին օժանդակութեան:

Ան ունի զանազան բնոյթի յատկացումներու ծրագիրներ, ինչպէս՝ միջոցներ չունեցող ընտանիքներուն, համալսարանական թոշակներ եւ հիւանդութեան օժանդակութիւններ:

Այս բոլոր ծրագիրներէն զատ, կ'օժանդակէ նաեւ համայնքին մէջ գործող մշակութային եւ մարզական միութիւններուն:

Կը մնայ նաեւ համայնքին պարտականութիւնը իր ապրած երկրին հանդէպ:

Եզիպտահայ համայնքը պետք է միտի բարեկամական յարաբերություններ մշակելու Եզիպտոսի եւ Հայաստանի միջեւ:

Նոյնպէս, տեւական կապեր պահէ Սփիւոքի զանազան համայնքներուն հետ, իրարու փորձառութենէն օգտուելու համար:

Կը մաղթենք որ Ազգային Իշխանութեան ներկայ առողջ քաղաքականութիւնը, պատրաստուած կղերականներու գործակցութեամբ, շարունակուի եւ կատարելութեան հասնի:

Պահ մը, եթէ երեւակայենք որ ամէն արաբական երկրի մէջ որդեգրուի եւ հետապնդուի նոյն սկզբունքը, ժամանակի ընթացքին որքան լայնածիր բարեկամութեան ցանց կարելի է ստեղծել:

Նոյնպէս, կը մաղթենք որ հին ղեկավարութիւնը հետզհետէ փոխարինուի նոր եւ աւելի պատրաստուած սերունդներով ու շարունակէ **ՏԱՐԲԵՐ ՄՏԱԾԵԼՈՎ, ԲԱՅՑ ՄԻԱՍՆԱԲԱՐ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ:**

15/10/1975

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Յառաջիկայ Գահիրէի Ազգային Քեմական ժողովին ամբողջական ընտրութիւններու համագործակցական ցանկով մը ներկայանալու համար, ընդմէջ ``Արեւ``ի, ``Յուսաբեր``ի եւ ``Ջահակիր``ի շրջանակներու ներկայացուցիչներուն

Նկատի ունենալով Եզիպտոսի Էջիպտական Քեմի Գահիրէ քաղաքի հայ լուսաւորչական /օրթոտոք/ համայնքի անդամներու թուական զգալի նօսրացումը եւ ատոր հետեւանքով գործօն տարրերու նուազումը;

Նկատի ունենալով ազգային գործերու լաւագոյնս մատակարարման անհրաժեշտութիւնը;

Նկատի ունենալով Քեմիս կորսուած խաղաղութիւնը վերահաստատելու կարիքը;

Նկատի ունենալով համագործակցութեան մը ի նպաստ արտայայտուած փափաքները, եւ

Նկատի ունենալով Քեմիս յարմարագոյն ոյժերը աշխատանքի լծելու առաջադրութիւնը;

``Արեւ``ի, ``Յուսաբեր``ի եւ ``Ջահակիր``ի շրջանակներու ներկայացուցիչները, վերոյիշեալ նպատակները կարենալ իրագործելու համար, խորհրդակցութիւններ ունեցան եւ բանակցութիւններ վարեցին եւ համաձայնեցան հետեւեալ կէտերուն շուրջ.

Ա. Իւրաքանչիւր շրջանակ պիտի մասնակցի իշխանութեան 4 թեկնածուներով, զուտ 12 երեսփոխան.

Բ. Մնացեալ 12ի ընտրութիւնը կողմերու լիակատար հաւանութեամբ յանգեցաւ հետեւեալ ցանկի կազմութեան.

- | | |
|---------------------|-------------------------|
| 1. ԲՐՈՒՏԵԱՆ ԲԻՒՋԱՆԴ | 7. ԳՐԼԸՔՏԱՆԵԱՆ ԱՐԹՕ |
| 2. ԹԷՐԱՆԵԱՆ ՊԵՐԺ | 8. ԳՕՂՈՍԵԱՆ ՏԻԳՐԱՆ |
| 3. ՋԱԳԱՐԵԱՆ ԽՈՍՐՈՎ | 9. ՔԷՕՆՊԼԵԱՆ ՎՐԷԺ |
| 4. ԿԷՎՐԷԿԵԱՆ ԺԱԳ | 10. ՔԻԼԻՏՃԵԱՆ ՓՈԼ |
| 5. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՊԵՐԺ | 11. ՔԻԻՐՔՃԵԱՆ ՀԱՅԿԱՋՈՒՆ |
| 6. ՉԷՉՃԷՆԵԱՆ ՎԱՀԱՆ | 12. ԲԱՆԵԱՆ ՆՈՒԳԱՐ |

Որոնցմով կ'ամբողջանայ ներկայացուելիք համագործակցական ցանկը, 24 երեսփոխան:

Գ. Կողմերը քննեցին նաեւ թիմի յուզող Գալուստեան Ազգային Վարժարանի հարցը եւ որոշեցին աշխատանքներ տանիլ վարժարանը պահելու իր ներկայ վիճակով, իր երկրորդականի բաժնիով:

Handwritten signatures and initials at the bottom of the document.

Դ. Աշխատանք տանիլ որ Գալուստեանի ծնողաց խորհուրդը իր զործունէութեան ծիրէն չեկլէ շեղելով իր ծրագիր-կանոնագրի տրամադրութիւններէն եւ ծնողաց խորհուրդի անունը չշահագործուի դպրոցական հարցերէ զատ այլ նպատակներ հետապնդող աշխատանքներու մէջ:


Ե. Գահիրէի էջմիածնական թեմը համաձայնուած համազործակցական գանկով մը օժտելէ յետոյ, այնուհետեւ աշխատանք տանիլ ընջել տալու այն դատը որ բացուած է Պր. Հայկազուն Քիւրքճեանի անունով ներքին Գործոց Նախարարութեան դէմ, մեր կազմական-կանոնագրին տրամադրութեանց ոչ համաձայն եղած հրահանգներուն համար:

Այս համաձայնագիրը եղած է երեք օրինակով որուն տակ կը ստորագրեն երեք կողմերու ներկայացուցիչները:

"ԱՐՄԻ"ի Երջանակէն
Դազըմեան Նարպիս




Քովմասեան Թիրայր



Տեփոյեան Վահագն




Տէօվլէթեան Նորայր




"ՅՈՒՍԱԲԵՐ"ի Երջանակէն
Գազանճեան Սեպուհ



Քուշեան Եփրեմ



Տ. Պայրամեան Սուրէն



Սարգիսեան Վ. Սարգիս




"ԷՆՏԵՆՍԻՐ"ի Երջանակէն
Զօրայեան Նուպար



Պալեան Զաւէն



Պալեան Սարգիս



Գահիրէ 15 Հոկտեմբեր 1975